

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐԳՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
06.04.2022թ.

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Առաջատար մասնագետը

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, մասնակցում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախապատրաստման աշխատանքներին, իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը,

բ) անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնարդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին

գ) Իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին

դ) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

2. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ,«Համայնքային ծառայության մասին»», «Տեղական ինքնակառավարման մասին»», «Տեղական տուրքերի և վճարների մասին»», «Հողի հարկի մասին»», «Նորմատիվ իրավական ակտերի մասին»» «Բյուջետային համակարգի մասին»» «Գույքահարկի մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր

լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 6-ին ժամը՝ 12⁰⁰-ին, Ֆերիկի համայնքապետարանի շենքում

(հասցեն՝ Կոմիտասի փող. շենք 6)

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-2) թափուր պաշտոն զբաղեցնելու համար.

Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ՝

- ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
 - բ) քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական շտեմարանի հետ կապված աշխատանքները .
 - գ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
 - դ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր.
 - ե) հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.
 - զ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը
 - է) քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
 - ը) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը.
 - թ) պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ գյուղապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.
 - ժ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
- 2-րդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
- Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ա) միջնակարգ կրթություն
 - բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ,<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.
 - գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
 - դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 6-ին ժամը՝ 13⁰⁰-ին, Ֆերիկի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Կոմիտասի փող.շենք 6)
- Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- ե) դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
 - զ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայականի(ների պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
 - է) հայտարարությունային մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. փետրվարի 15–ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

ը) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ձանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

թ) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները.

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

ժ) անձնագրի պատճեն

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարան (հասցե՝ հ. Ֆերիկ, Կոմիտաս 6 շենք, և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի ապրիլի 21-ը ժամը 18⁰⁰: